Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-01-2024 թ. որոշմամբ
««ՎԻԶՈՒԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՎԻԶՈՒԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 4
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1153268
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2020-11-26
1.5 ՀՎՀՀ-ն		01021075
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93699093
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.visualarmenia.org
1.8 Էլեկտրոնային փոստը		sona.markosyan@visualarmenia.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արևիկ Ավետիսյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հովհաննես Ղազարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կրթական	238,859,800
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		

11. Իրականացված ծրագրերը՝	
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
«Աշխարհացույց» ծրագրի	260,388,649
Ուսուցչի մենթորական կարողությունների զարգացման ծրագիր	4,000,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	270,099,337
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	264,388,649

Նշումներ՝

«Հայրենիքի վերականգման և զարգացման» Հիմնադրամը (հիմնադրամ) կամավոր զույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային հիմնադրամ է: Այն գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2020 թվականի նոյեմբերի 26-ին, գրանցման համարը՝ 222160115326 8: Հիմնադրամի կանոնադրության մեջ 2021 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել փոփոխություն՝ «Հայրենիքի վերականգման և զարգացման» հիմնադրամ բառերը փոխարինվել է «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ բառ

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամ

ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ	9
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ	10

«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի 49/3, 7-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 11 96 77 77

"IFP" LLC
49/3 Komitas Av., 7th floor, Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 11 96 77 77
www.ifp.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամի Ղեկավարությանը

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
- նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի
- և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային

ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում,

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքների հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու աուդիտորն է՝

Ռոզա Հարությունյան

Ղեկավար աուդիտոր

«Այ էֆ Փի» ՍՊԸ
Տնօրեն

Աշոտ Բարսեղյան
28 հունիս, 2024թ.

«Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին
հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Նվիրներից եկամուտներ	5	103,384	13,247
Իրականացված ծրագրեր	6	(73,990)	(1,849)
Այլ եկամուտ		16	10
Վարչական ծախսեր	7	(17,719)	(19,916)
Այլ գործառնական ծախսեր		(2,118)	(2,935)
Արտարժույթի վերագնահատումից օգուտ/(վնաս)	8	(9,556)	11,443
Շահույթ/վնաս մինչև հարկում		17	-
Շահութահարկի գծով ծախս		(3)	-
Հաշվետու տարվա համապարփակ արդյունք		14	-

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 25) հաստատվել են ղեկավարության կողմից 28.06.2024թ., ստորագրությամբ՝

Հովհաննես Ղազարյան — *Սոնա Մարկոսյան*

Գործադիր տնօրեն — **Գլխավոր հաշվապահ**

	Ծնթ.	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	7,324	2,771
Ոչ նյութական ակտիվներ	10	261,287	92,494
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	11	25,400	19,056
		294,011	**114,321**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		2,266	46
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	12,738	43,863
		15,004	**43,909**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**309,015**	**158,230**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կուտակված պակասուրդ (հավելուրդ)		(222)	(236)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	268,611	95,265
		268,611	**95,265**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	6,032	2,351
Եկամուտներին վերաբերող շնորհներ	15	34,594	60,850
		40,626	**63,201**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**309,015**	**158,230**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 25) հաստատվել են ղեկավարության կողմից 28.06.2024թ., ստորագրությամբ՝

Հովհաննես Ղազարյան — Սոնա Մարկոսյան

Գործադիր տնօրեն — **Գլխավոր հաշվապահ**

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհներից	45,351	47,991
Վճարումներ զնումների դիմաց	(72,046)	(21,381)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(3,661)	(2,366)
Մենթորական կրթաթոշակ	(4,000)	-
Այլ ելքեր	(2,034)	(1,221)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**(36,390)**	**23,023**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված դրամաշնորհներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	193,509	72,218
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման դիմաց վճարումներ	(188,342)	(72,218)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**5,167**	**-**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(31,223)**	**23,023**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	98	(11,020)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	**43,863**	**31,860**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	**12,738**	**43,863**

Բովանդակություն

1	Հիմնադրամի մասին	10
2	Պատրաստման հիմքեր	11
3	Գնահատումներ և դատողություններ	13
4	Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում	15
5	Շնորհներից եկամուտներ	17
6	Իրականացված ծրագրեր	18
7	Վարչական ծախսեր	18
8	Արտարժույթի վերագնահատումից օգուտ/վնաս	18
9	Հիմնական միջոցներ	19
10	Ոչ նյութական ակտիվներ	20
11	Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	21
12	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21
13	Ակտիվներին վերաբերող շնորհներ	21
14	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21
15	Եկամուտներին վերաբերող շնորհներ	22
16	Կապակցված կողմերի հետ գործարքներ	22
17	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	22
18	Պայմանական դեպքեր	25

1. Հիմնադրամի մասին

1.1 Հիմնադրամը և նրա հիմնական գործունեությունը

«Հայրենիքի վերականգման և զարգացման» Հիմնադրամը (հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային հիմնադրամ է: Այն գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2020 թվականի նոյեմբերի 26-ին, գրանցման համարը՝ 222.160.1153268:

Հիմնադրամի կանոնադրության մեջ 2021 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել փոփոխություն՝ «Հայրենիքի վերականգման և զարգացման» հիմնադրամ բառերը փոխարինվել է «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ բառերով:

Հիմնադրամը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական, ստեղծագործական, նորարարական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները.

- Մշակել ծրագրեր, որոնք համակարգային կերպով կարձագանքեն կրթության, սոցիալական և տնտեսական կյանքի, առողջապահության, շրջակա միջավայրի և այլ ոլորտներում առկա մարտահրավերներին,
- Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս՝ սփյուռքում, մշակել և իրականացնել սոցիալական, մշակութային, կրթական, գիտական, նորարարական, ստեղծագործական, առողջապահական, բնապահպանական և այլ ծրագրեր միտված հայրենիքի վերականգնմանն ու զարգացմանը, ինչպես նաև աջակցել նմանօրինակ ծրագրերի իրականացմանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը.

- Խորհրդի նախագահ՝ Սոնա Հովհաննիսյան,
- Խորհրդի անդամ՝ Աշոտ Պետրոսյան,
- Խորհրդի անդամ՝ Վահագն Ջավախյան,

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի

հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:

2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:
2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:
Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմքեր

2.1 Համապատասխանության հավաստում

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել

հաշվապահական հաշվառման գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

2.2 Չափման հիմքերը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

2.4 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ են կիրառվել 2023թ.-ին:

Ստանդարտ	***Ստանդարտի կամ մեկնաբանության անունը***
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն):*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 12	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում– Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ում (Էականության մասին դատողությունների կիրառում), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ ՀՀՄՍԽ կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Հիմնադրամի ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամում հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Կիրառելիության ժամանակաշրջանի սկիզբ
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ	1 հունվար 2024թ.
ՀՀՄՍ 1	Ոչ ընթացիկ պարտավորություններ կովենանտների հետ	1 հունվար 2024թ.
ՖՀՄՍ 16	Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ	1 հունվար 2024թ.
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ	1 հունվար 2024թ.
ՀՀՄՍ 21	Փոխանակելիության բացակայություն	1 հունվար 2025թ.

3. Գնահատումներ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջներին համապատասխան կազմելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի

ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները պարբերաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Իրական արժեքի չափում

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):
- *Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*
- *Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր*
- *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)*

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունը աննշան է:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով չափվող

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	12,738	43,863
		12,738	**31,860**

Ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով չափվող

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	14	181	30
		181	**30**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ստացված փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հիմնադրամի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև ժամկետային ավանդներից:

<u>Պարտքային ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա</u>

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը սահմանափակվում է Հիմնադրամի վերոհիշյալ ֆինանսական ակտիվներով, որոնք ամբողջությամբ ծագել են ներքին շուկայից:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Հիմնադրամի արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Հիմնադրամը հակված չէ շուկայական ռիսկի ազդեցությանը:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով, այսինքն՝ երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից, որոնք, ի սկզբանե արտահայտված են եվրոյով և ԱՄՆ դոլարով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2023թ.	*31.12.2022թ.*
1 Եվրո	*404.79*	*393.57*
1 ԱՄՆ դոլար	*447.90*	*420.06*

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ վերջինս պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 90 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

5. Շնորհներից եկամուտներ

	2023թ.	***2022թ.***
	հազ. դրամ	***հազ. դրամ***
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	*11,119*	*1,002*
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	*92,265*	*12,245*
	103,384	***13,247***

6. Իրականացված ծրագրեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
«Աշխարհացույց» ծրագրի սպասարկում	17,185	
«Աշխարհացույց» ծրագրի ամորտիզացիա	9,227	
Սմարթ էկրաններ	43,578	1,475
Մենթորական կրթաթոշակ	4,000	
Այլ	-	374
	73,990	**1,849**

7. Վարչական ծախսեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ փոխհատուցումներ	1,468	5,051
Վարձակալության	2,633	8,689
Հիմնական միջոցների մաշվածություն և ամորտիզացիա	1,172	1,002
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,204	1,625
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	506	602
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	4,963	536
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	600	2,261
Բանկային ծառայություններ	96	95
Այլ	1,077	55
	17,719	**19,916**

8. Արտարժույթի վերագնահատումից օգուտ/վնաս

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտ	299	22,654
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախս	(9,855)	(11,211)
	9,556	**11,443**

9. Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	Տնտեսական գույք	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվար 2022	1,006	3,383	4,389
Ավելացումներ	395	-	395
Առ 31 դեկտեմբեր 2022	1,401	3,383	4,784
Ավելացումներ	3,129	3,292	6,421
Առ 31 դեկտեմբեր 2023	4,530	6,675	11,205
Կուտակված մաշվածություն			
Առ 1 հունվար 2022	779	257	1,036
Ժամանակաշրջանի ծախս	554	423	977
Առ 31 դեկտեմբեր 2022	1,333	680	2,013
Ժամանակաշրջանի ծախս	1,425	443	1,868
Առ 31 դեկտեմբեր 2023	2,758	1,123	3,881
Զուտ հաշվեկշռային արժեք			
Առ 1 հունվարի 2022	227	3,126	3,353
Առ 31 դեկտեմբեր 2022	68	2,703	2,771
Առ 31 դեկտեմբեր 2023	1,772	5,552	7,324

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 1,401 հազ. դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,006 հազ. դրամ): Հիմնական միջոցների գծով մաշվածության ծախսերը բաշխվել են հետևյալ հոդվածներով. Վարչական ծախսեր՝ 1,148 հազ. դրամ և Իրականացված ծրագրեր՝ 720 հազ. դրամ:

10. Ոչ նյութական ակտիվներ

	Հաշվապահական ծրագիր	«Աշխարհացույց» ծրագիր	Մշակման ծախսումներ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք				
Առ 1 հունվար 2022	250	-	20,457	20,707
Ավելացումներ	-	-	71,823	71,823
Առ 31 դեկտեմբեր 2022	250	-	92,280	92,530
Ավելացումներ	-	92,280	85,765	178,045
Առ 31 դեկտեմբեր 2023	250	92,280	178,045	270,575
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվար 2022	10	-	-	10
Ժամանակաշրջանի ծախս	26	-	-	26
Առ 31 դեկտեմբեր 2022	36	-	-	36
Ժամանակաշրջանի ծախս	24	9,228	-	9,252
Առ 31 դեկտեմբեր 2023	60	9,228	-	9,288
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2022	240	-	20,457	20,697
Առ 31 դեկտեմբեր 2022	214	-	92,280	92,494
Առ 31 դեկտեմբեր 2023	190	83,052	178,045	261,287

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի լրիվ մաշված ոչ նյութական ակտիվներ: Ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիայի ծախսերը բաշխվել են հետևյալ հոդվածներով. վարչական ծախսեր՝ 25 հազ. դրամ և Իրականացված ծրագրեր՝ 9,227 հազ. դրամ:

11. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար

Տրված կանխավճարը ոչ նյութական ակտիվի մշակման ծախսումների գծով է:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	5,851	6,277
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	6,887	37,586
	12,738	43,863

13. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվար	95,265	24,049
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից	184,465	72,218
Շնորհից եկամտի ճանաչում	(11,119)	(1,002)
Մնացորդ առ 31 դեկտեմբեր	268,611	95,265

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	181	30
Կրեդիտորական պարտքեր ոչ ընթացիկ ակտիվի գծով	5,677	359
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	-	1,962
Պարտքեր աշխատավարձի գծով	174	
	6,032	2,351

15. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվար	**60,850**	**47,560**
Ստացված շնորհներ ընթացիկ տարվա ընթացքում	238,860	120,209
Շնորհից եկամտի ճանաչում	(92,265)	(12,245)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին	(184,465)	(72,218)
Փոխարժեքային տարբերություն	9,652	(22,456)
Շնորհի հակադարձում	1,962	-
Մնացորդ առ 31 դեկտեմբեր	**34,594**	**60,850**

16. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Գործարքներ ղեկավարության հետ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը կազմել են 2023թ. համար 20,323 հազ. դրամ (2022թ. համար՝ 16,393 հազ. դրամ):

17. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Հիմնադրամի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Հիմնադրամի կողմից:

Արտարժույթով գործարքներ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա սպորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի

համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Կարճաժամկետ վարձակալություններ

Հիմնադրամը վարձակալել է գրասենյակային տարածք 2023թ. դեկտեմբերից: Հիմնադրամը կիրառել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի գործնական մոտեցումը՝ չճանաչելու ակտիվի օգտագործման իրավունք ելնելով վարձակալության պարտավորությունների կարճաժամկետ բնույթից: Հիմնադրամը ճանաչում է վարձակալության վճարումները շահույթում կամ վնասում՝ գծային մեթոդով վարձակալության ժամկետի ողջ ընթացքում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հիմնական միջոցներ	Տարի	Հաշվարկման մեթոդ
Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	1	գծային
Տնտեսական գույք	8	գծային

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:
Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի

ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Ոչ նյութական ակտիվներ	Տարի	Հաշվարկման մեթոդ
Հաշվապահական ծրագիր	10	գծային
«Աշխարհացույց» ծրագիր	10	գծային

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Շնորհներ

Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավորված երաշխիք, որ շնորհները ստացվելու են և բոլոր կից պայմանները կատարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում շնորհը պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել նախատեսված հատուցվող ծախսերին: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/(փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:

Հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները եւ հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող եւ նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) եւ չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:

Ժամանակավոր տարբերությունների հետեւանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջեւ ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերություն:
Հիմնադրամի եկամուտները անհատույց ստացված ակտիվներ են, որոնք շահութահարկով հարկվող չեն, իսկ դրանց հաշվին կամ գծով կատարված ծախսերը նվազեցման ենթակա չեն: Այդ և այլ նկատառումներով ընթացիկ տարվա ընթացքում Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

17. Պայմանական դեպքեր

Digitally signed by MARKOSYAN SONA 5001800162
Date: 2024.07.01 16:34:24 AMT

Ապահովագրություն

Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Հիմնադրամի գործունեության հետևանքով:

Դատական հայցեր

2023թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի կողմից և Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Տրված երաշխավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը տրամադրած երաշխավորություններ չի ունեցել:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2024 16:27